

Վ.ՍԱՐԴՅԱՆԸ ԵՎ ՀԱՄԱԵԽԱՐՀԱՅՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Վ. Գրիգորյան

Համաշխարհային գրականության բոլոր մեծությունները մի հիմնական ճանապարհով են ներկայացել ժողովուրդներին, դարձել նրանց իմաստուն գրուցակիցներն ու սերունդներին ուղեկցող մարգարեներ: Նրանք իրենց ազգային ոգու օտնով մտել են համամարդկային հոգևոր աշխարհ, կենսահաստատ գաղափարների կանթեղված լույսով դարձել հանուր մարդկության խղճի, բարության, ճշմարտության ու արդարության ջահակիրներ: Մակայն լինում են բացառություններ: Հանդես են գալիս արվեստագետներ, որոնք համամարդկային եռվոր տաճար են մտնում գուգահեռ երկու ուղիներով: Նման արվեստագետներից է աշխարհառաջ Վիլյամ Սարոյանը, որը համարվում է 20-րդ դարի ամերիկյան գրականության հանճարեղ ներկայացուցիչներից մեկը ու ոչ պակաս՝ հայ մշակույթի:

Արմատներով հայ՝ գրված պապենական ավանդական երկրից, ծնված ԱՄՆ-ում գաղթականի ընտանիքում, սնված համաշխարհային մշակույթի հոգևոր հացով, Վ. Սարոյանը գրական հենց առաջին փորձերում խոսեց համամարդկային գաղափարների ու հույսերի մասին. ինքնատիպ ու բազմնաբան երկերի շնորհիվ իր տեղը գրավեց այնպիսի եպոստոլությունների կողքին, որպիսիք են Լեննաո Հեմինգուեյը, Ռիչյամ Ֆոլքները, Թոմաս Էլուիֆը ու այլ մեծություններ: Մակայն նա երբևի չմոռացավ նահապետ Հայկից իր նախնիներին ավանդված «էին հայրենիքը», որն իր համար արդեն «կորուսյալ երկիր» էր, արյան կանչով դարձավ իր ժողովրդի անանց ցավ արտահայտչներից մեկը, մի քանի անգամ այցելեց յաթաղանից փրկված փոքրիկ Հայաստան. հանդիպեց ու գրուցեց իր եւ անվանի, եւ պարզ ու հասարակ հայրենակիցների հետ ու կարոտով ու հպարտությամբ բարձրաձայնեց, որ ինքը հայրենի հողից արմատահասն նդած տոհմաժողով արտոլ է, որ ինքն ամերիկյան միջավայրում հառակ կենտած տսննի է, որի գուշակող շշուշնեղ ծփում են անգլերեն՝ ներկայացնելով իրեն որպես ամերիկյան գրող, սակայն հոգու խորանում հնչում է այն օրհներգը, որ դողաբերում է ազգային պատկանելության ու արժանապատվության սրբազան գազարմների գունավոր: Նրա սրտից ճառագեց այն ծիածանը, որ Ֆրեդսոն Լավլթեյց Երևանին ու ծնրը դնելով կրծքին՝ որդիաբար հայտարարել: «Թե՛ն անգլերեն կգրեմ ու թե՛ն ծննդով ամերիկացի եմ, քայց ինքզինքս կըհամարեմ հայ: Իմ գործածած բառերը անգլերեն են, միջավայրը, որում մասին կը գրեմ՝ Ամերիկան է: Ոգին, սակայն, որ զես գրելու կը մղե՝ հայկական է: Ուստի, նա հայ գրող եմ: Ես հայտա տեմ հայ ժողովրդի ազնվականությամբ, արիությամբ, իմացականությամբ, ուժով, պարզությամբ, սրամտությամբ, նրա հանճարով ու խիզախությամբ»:

Վ. Սարոյանն իր այս խոստովանությամբ ծննդեց նետեց այն կարծիքին, ըստ որի, գրողը որ չնզվով գրում է, պատկանում է այդ գրականությանը: Եվ իր այդ նոր մոտեցումը հաստատեց հայկական երանգներով հյուսած գեղարվեստական հունձրով: Միաժամանակ նա իր ստեղծած բազմազգ կերպարների պատկերասրահով ընդգծեց, որ աշխարհի բոլոր ժողովուրդները հանդիսանում են համաշխարհային հովաճարագորդ մասնիկներն են, պարտավոր են ապրել խաղաղ ու համերայն: Նա գուգակեց ժառանգականության ու միջավայրի գործոնները՝ ընդգծելով, որ ինքը հայ է արյունով ու ամերիկացի՝ միջավայրով, որ ինքը հայ է, քայց կալիֆորնիան իր տունն է, իր ծննդավայրը, որին խորապես կապվել է Հայաստանի ու Բիթլիսի չափ:

Վտարաբքի մի երանգ է նշանվում Վ. Սարոյանի գեղագիտական մտածողության ու ստեղծագործության համապատկերում: Այստեղ նա համեմատության կողմնին ինքն է ու հայալիզու արվեստագետները: Եթե մարդն լիզվով արարող հայ գրողներն ազգայինից են մտել համամարդկային ոգու աշխարհը, ապա Վ. Սարոյանը համամարդկային ոգին բերել ու միաձուլել է հայոց ոգուն: Դրանում նրան օգնել է իր հավատը մարդու հանդեպ, ինչպես ինքն է խոստովանում. «Ես կը հավատամ մարդու բարության: «Ես կը հավատամ, որ մարդու ճակատագիր-ուժը ազնվական ճակատագիր է: Ես կատեմ այն ուժերը, որոնք կրճատեն կործանել մարդու ազատությունը»²:

Վ. Սարոյանը ծնվել է 1908-ին, ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի Ֆրեզնո քաղաքում, Արմնույան Հայաստանի Բիթլիս քաղաքից գնացած հայ ընտանիքում: Սարոյան-գրող

մեկտրման մեջ մեծ դեր են խաղացել ինքնակրթությունը, ամերիկյան ու համաշխարհային գիտնականության ընթերցումը, հարազատ ժողովրդի եղգնոր մշակույթի, ավանդույթների, ստեղծության տարրերի ժառանգումը, հայկական շրջապատի ազգային ինքնատիպությունը:

Առաջին անգամ տպագրվել է 1933-ին, Բոստոնի «Հայրենիք» շաբաթաթերթում՝ Սիրակ հոլանդ ստորագրությամբ: Լայն ճանաչում է ձեռք բերել «Նիդալա պատմանին թաղող ճոճածողի վառ ու այլ պատմվածքներ» առաջին գրքով (1934թ.): Գրախոսելով այդ ժողովածուն՝ ամերիկյան ռեպուտա Բ. Ռատկոն գրել է. «Իհնչեմ է եստկանշեական Սարդյանի համար՝ որպես գրողի: Մարդասեր բանն է, պողոթնական ու խելացի, նա թախմոտ է, քնքուշ ու մարդկային, նա միամիտ է լուսնում, սակայն բնավ միամիտ չէ... Նա առում է դաժանությունն իր թուրդ դրսևորումներով, նա հարգում է մարդկային արժանապատիվությունն ու հպարտությունը»¹:

Վ. Սարդյանը գրական ասպարեզ մտավ միանգամից: Գրական կյանքի առաջին տարիներին նա հիմնականում գրել է պատմվածքներ, որոնց մեծ մասն ամփոփել է «Ներշնչում է արտաշնչում» (1936), «Փողրիկ նրելխաներ» (1937), «Ողջո՛ւյն քեզ, սեր» (1939), «Իմ անուր նստում ե» (1940), «Միլելի փողրիկ» (1973) «Ասորին ու այլ պատմվածքներ» (1949), «Ողջ աշխարհը» (1956) ժողովածուներում:

Վ. Սարդյանի հաջողությունը պատմվածքի ժանրում աննախընթաց էր: Միայն 1934-1962թթ. ընթացքում ուղիղ վեց անգամ նա ստացել է կարճ պատմվածքի համար սահմանված Օ' Ֆլորի անվան նշանավոր մրցանակները: Պատահական չէ նաև այն հանգամանքը, որ այդ զատվածքների պատումներն ստացել են «սարդյանական ոճ» որակումը:

Վ. Սարդյանը խիզախեց նաև վիպագրության ասպարեզում՝ գլխիցին հանձնելով «Ունիսի Զեկտի արկածները» (1941), «Ռոք Վահրամ» (1951), «Հայրիկ, դու խենթ ես» (1952), «Մայրիկ, ես սիրում եմ քեզ» (1957), «Չմեռնելու համար» (1963), «Օրեր կյանքի ու մահվան կամ փախուստ ճանի լուսին» (1970) գործերը, ինչպես նաև «Մահազեղ» (1979) մահախոսականների ժողագրությունը ու այլ երկեր:

Համաշխարհային թատերգության անթառամ էջերը դարձան Վ. Սարդյանի «Իմ սիրտը անքնում է», «Քո կյանքի ժամերը», «Հն՛ի, ո՛վ կա», «Սովալները», «Տարեկանի արտում», «Պինգ-պոնգ խաղացողները», «Կոտորածն անմեղաց», «Հերտուած մի գնա» ու այլ դրամատիկական երկեր:

Իր պատմվածքներով, նորավիպերով, վիպակներով ու վեպերով նա վարպետորեն ներմուծել է տեղի ու ժամանակի իրողության հետ սերտորեն կապված սոցիալ-հոգեբանական թարմ ընկալիչ, արդիական հնչողություն ունեցող մարդասիրական բարոյական մտայնություն, ռատոմի նոր ձևեր, քնարականությամբ ու հումորով լի հնչերանգներ, բնականություն ու ճշմարտացիություն, պատկերների ու կերպարների գունագեղություն: Վ. Սարդյանի գրական շատ կնիքաբերներ ներկայացնում են հայկական միջավայրը՝ ազգային ավանդույթներով, բարերրով: Հայրենիքի մոտիվը, ինչպես ու նրա յարավոր ավանդույթները պահպանող մարդկանց կնիքաբերներ հակադրվում են ազդելակերպի համահարթեցնող չափանիշներին: Իրականության հետ նույնախիսի հարաբերության մեջ են «տարօրինակ» ու ծախողը մայրենից սարդյանական կնիքաբերներ: Դրանք համաշխարհային գրականության մեջ մտել են որպես հուզու մարդության խորհրդանշան: Իրականության ու երազանքի հակադրության, անհատի ներքին ազատության ու հոգեկոր գեղեցկության, սիրո ու բարոյի հաստատման մոտիվներն են մարմնավորված Սարդյանի արձակում, որոնք հետաքրքրական լուծում են ստացել նաև նրա դրամաներում:

1942թ. Վ. Սարդյանը գորակալվել է բանակ, աշխատել զինվորական սցենարների ստեղծման վրա: Նա ավանդազն ընկալել է որպես աղետ, այդ թվում արտագույն «Մարդկային կատաղեղություն» վիպակում ու «Վեյսի Զեկտի արկածները» վեպում: 1950-1960-ական թթ. Սարդյանն ապրել է Եվրոպայում, ապա նորից հաստատվել ԱՄՆ-ում: Այդ տարիներին ինքնակենսագրական նյութի օգտագործումով ստեղծել է հոգեբանական վիպակների շարք:

1960-ական թթ. սկսած գրել է հուշագրական ժանրի գործեր: Հատկապես ուշագրավ են Բ. Շուրին, Չ. Չալիխյան, Թ. Լիխտին, Ե. Չարնեցին ու ուրիշ հսկաների նվիրված էջերը, հեղինակի մտղումները գրականության կոչում պնդաբերող:

Վ. Սարդյան մահացել է 1981թ. մայիսի 16-ին, Ֆրենկոյոյում, աճյունի մի մասը թաղված է Երևանի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

Վ. Սարդյանն ստեղծագործել է ավելի քան 50 տարի՝ մարդկությանն ընծայելով 70 եստերներ, որոնցում ընդգրկված են հարյուրավոր մնայուն պատմվածքներ, վիպակներ, վեպեր, պիեսներ, քնարական-ինքնակենսագրական ու հուշագրական արձակ գործեր: Անվանի գրողը գրական ասպարեզ է իջել Սմերիկայի համընդհանուր ճգնաժամի տարիներին: Այդ

ժամանակաընթացքում գեղարվեստական գրականության մեջ նկատելի դարձան սոցիալական բողոքն ու գայլությունն արտահայտող երկերը՝ հասարակական կացութեամբ տիրող անարդարության, անբարոյականության, դաժանության և այլ արատավոր երևույթների խիստ քննադատությամբ: Սարգսյանն ընթացավ դեմոկրատական գրականության մարտուղիով, կանգնեց մարդկային իրավունքների պաշտպանության դիրքերում: Հրաժարվելով մարդկային կյանքում գոյություն ունեցող ողբերգական իրավիճակների նկարագրությունից՝ Սարգսյանն ընտրեց կենսահաստատ ու լուսավոր նրանցներ՝ դրանց միաձուլելով ծիծաղ, բարություն, հումոր: Ամերիկյան կյանքի ճշմարտացի պատկերման հետ մեկտեղ նա հույսվեց նաև հին «հայրենիքի կարոտը», նրա առաապելված ավանդույթները կյանքի բոլոր բնագավառներում: Հռչակվածը արվեստագետը պարզապես կյանքն ընկալում էր բանաստեղծություն: Ստեղծագործելիս նա խրճ գգում էր ազատ, ուշադրություն չէր դարձնում ժանրային ընդունված օրենքներին ու կանոններին: Դրա շնորհիվ էլ հենց իր գրական մուտքից ներկայացավ որպես ծնավորված, ինքնատիպ գրող: Սակայն միաժամանակ նրա ստեղծագործական ծնագիրն ասեղծված էր համաշխարհային գրականության հայտնի դեմքերի՝ Մոպսանի, Չեխովի, Անդրեյսոնի և այլ հանճարեղև ավանդույթներին:

Վ. Սարգսյանի ստեղծագործական ուղին բաժանվում է չորս փուլի՝ հետևյալ արդյունքներով՝ պատմվածքներ (1934-1939), թատերական երկեր (1939-1943), վեպեր (1943-1962), ինքնակենսագրական գործեր և խոհագրություններ (1963 թվականից մինչև մահը): Սակայն այս բաժանումը կարելի է համարել պայմանական, որովհետև 1950-1960-ական թթ. նա գրել է նաև պատմվածքներ:

Ուսումնասիրելով ամերիկյան սարդանսգիտության ընթացքը՝ նկատվում է, որ ժամանակին գրախոսել են նրա համարյա բոլոր գործերն ու առանձին նշանակալից երկերը Խիսթեն, Դեյվ Նեմ, Դրվատանքի խոսքեր, Ե՛մ միտումնավոր ժխտումներ, սակայն ընդհանրության մեջ նա համարվել է երևույթ ոչ միայն ամերիկյան, այլև համաշխարհային գրականության մեջ: Ընդգծվում է, որ Վ. Սարգսյանը 1930-ական թթ. ամերիկյան գեղարվեստական խոսքի նոր հուն բացողներից է, որ նա իր նկատելի նպատակն է քնել նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ստեղծված գրականությանը՝ քաղաքացիական մարդասիրություն, լավատեսություն, աստվածություն՝ մարդկությանը վիշտ ու ցավ պատճառող չար ու ժերի հանդեպ: Սարգսյանը գնահատվեց որպես Մարդ որոնող ու գտնող արվեստագետ, որպես ժողովուրդներ համերաշխության ջատագով: Բարձրաձայնվեց, որ Սարգսյանը ստեղծել է պարզ մարդու կերպարը՝ ներկայացնելով ազնիվ ու գործարար ամերիկացուն՝ ինչ գույնի և որսնդից էլ հայտնված լինի:

Վ. Սարգսյանը ստեղծել է իր ոճը՝ խուսափելով ավանդական ձևերից ու օրինաչափություններից, զգուշանալով ուրիշներին կրկնելուց: Դա հնարավորություն տվեց նրան պատումի բոլոր ձևերում իրեն դրսևորել որպես ինքնատիպ գրող, որպես իմաստ հեքիաթասաց անցյալը ներկային ու ներկան ապագային շաղկապող մարգարե: Սակայն նա չլսարժավ «Մի կա հավատալ չարին» պատգամի բարոյախոս:

«Ձեր կյանքի ժամանակը» դրամայում չարության դեմ նա հնչեցնում է իր գայլությունը՝ «Արհամաքիք չարին ու անագնիությունը, բայց ոչ չար ու անագնիվ մարդկանց: Մի՛ ամաչիր բարի ու բնույթ լինել, բայց հենց որ կյանքիդ որևէ ժամին վրա հասնի սպառնություն գործելու պահը, գործիր այդ սպառնությունն ու մի՛ զղջա: Լյանքիդ ժամերն ապրիր այնպես, որ քեզ բաժին ընկած ժամերին չավելացնես աշխարհի վիշտն ու տառապանքը, այլ ժպիտով ընդունե՛ս... անսահման լույսն ու խորհանդրը»¹:

Վ. Սարգսյանի համար հավասարագոր են բոլոր ազգերը: Նա չընկրկեց աշխարհի չար ու ժերի կարծիքներին առջև, որդիաբար ու արդարամտորեն ներկայացրեց Հայաստանն ու հայը խարազանեց նրա երդյալ թշնամիներին, ցավի ճիչ դարձրեց Հայոց մեծ եղեմը, ժխտեց ցեղասպանությունը՝ աշխարհի որ մատու էլ այն տնդի ունենա:

Հիբափի, հարուստ ու բարձրաքմեք է Վ. Սարգսյանի գրական ժառանգությունը՝ համաշխարհային մշակույթի գանձարանում: Գեղագետ ու մտածող Վ. Սարգսյանը գոյափիլիսոփայության արմատները հետևում են հին ու նոր ժամանակների փիլիսոփայական համակարգերին՝ առանձապես 19-20-րդ դարերի գրողների և փիլիսոփաների գաղափարաբանությանը: Վ. Սարգսյանը ինքն է հաստատել. «Շնորհիվ Անդրեյսոնը, որ աղել է Հեմինգուեյին՝ աղել է ինձ: Ես սիրում եմ Շնորհիուն, նրա մասին գործերն են գրել: Միքսում եմ նաև Ջեյմս Ջոյսին, որին Ամերիկայում ոչ ճշ չի կարող հավասարվել: Նա խորունկ գետ է, Հրազդան, որ անցնում է մարդկանց կյանքի և նրա՞նք միջով»²:

Մարդկանց կյանքի և երազի մասին սարդյանական փիլիսոփայությունը ներառել է նաև այնպիսի ազգային կենսափորձն ու գաղափարաբանությունը: Ակադեմիկոս Ս. Սարխյանը նշում է, «Վիլյամ Մարդյանի գնդարկմանական աշխարհը ներկված է հայկական գույներով, յոթ նրա պատկերներում հայը ոչ այնքան Սփյուռքի միավոր է, որքան՝ ամերիկացի: Այսպես են նաև ճապոնացին, մեքսիկացին, ասորին, շոտլանդացին: Նրանք մասնիկներն են առաջնախային մի խառնարանի, որը կոչվում է ամերիկյան հասարակություն: Բայց և նրանցից յուրաքանչյուրն իր մեջ, որպես հավերժական հուշ, կրում է էթնիկական ոգու արտաբանական փոփոխությունը...»: Միաժամանակ անվանի գրականագետն ընդհանրացնում է. «Ականավոր գրողի ազգային զգացողություններն աղմուկում են հայ գաղափարաբանության հիմնադրոյթին»:

Ս.Սարխյանի այս դիտարկումը մեզ տանում է «Մառնա ծներ» ժողովրդական շրջագանդադրության գաղափարների աշխարհը, որ իրենց հետ Ֆրեդոն են տարել նրա ծնողներն ու եղբայրները, որոնց միջավայրում մոր կաթի հետ անցել են Սարդյանին ու դարձել արյան ան: Չնոսաններ, որ Սարդյանը 3 տարեկանում գրկվել է հորից, որ նրա մանկությունն անցել է Վանանդում, ճակատագրով դարձել որբացած մի իմաստուն ժողովրդի ժառանգորդ: Խառնատությունն այստեղ չի կազում: Որքայանք հառավ առած այրը վերջին հաշվով դառնում է լաբությունը ժխտող, բարությունը հաստատող իմաստասեր: Սարդյանի լավատեսությունն ու բարությունն առաջին հերթին իրեն են փոխանցվել մայր ժողովրդից՝ դառնալով համոզմունք, անաղիմաստական խոսքի շաղախ ու հավատ: Պատահական չէ, որ Սարդյանի բարությունն ու անցյալիցները խոսիտություններ են վերածվել ոչ միայն մեծերի համար ստեղծած ներկում, այլև փոքրությունը ներկայացնող ստեղծագործություններում:

Վերև նշեցինք, որ Վ. Սարդյանի ստեղծագործությունը անդնդաձև եղել է ամերիկյան զբոսնախաղաղության և բնագիտության ուշադրության կենտրոնում: Այս տեսակետից շատ ոգեշնչող կարող են նախանձել նրան: Սարդյանի մասին տպագրված մեծագույնություններն ու աշխատություններն թիվը հասնում է 50-ի: Այդ հետաքրքիր գործընթացին մասնակցել են այնպիսի նշանավոր գրաքննադատներ, սրբախիթ են Դավիթ Քալոնները, Հովարդ Ֆրանսը, Էդվարդ Ֆոարտը, Լոյսիլը Թոմերը, Դավիթ Խերիան, Նոնա Բալաքյանը և այլք: Բացի այդ, ամսվա մեծերն էթերում տպագրված գրականությունների ու հոդվածների քանակը 150-ից ավելի է:

Վ. Սարդյանի կարտուն ու սերը Հայաստանի, այսինքն՝ հայոց ոգու հանդեպ եւրոպիցին ոչ անպես նրա ստեղծագործության մեջ, այլև շուրջին դարձան նախնիների նրկող այցելվելու արդյունք: Նա Հայաստան այցելեց 1935, 1960, 1976 եւ 1978թթ.: Դրանք ստվ Ֆիգիակական խոնարհումներ չէին: Մասկվայում նրա հանդիպումը Էդիշ Զարենցի հետ, նրա մտերմական զրույցները Գուրգեն Մահարու, Հրանտ Մաթևոսյանի, Վահագն Դավթյանի, Ռազմիկ Դավթյանի և ուրիշ գործիչների հետ անախ սփոփել են մեծ գրողին և ալաւ հարստացրել նրա նշանագրությունը՝ որպես նոր ներդրում մի կողմից ամերիկյան արձակի, մյուս կողմից՝ հայ մշակութային պատմության մեջ: Այստեղից էլ՝ այն հետաքրքրությունը, որ ծփացել է Սարդյանի անձի և նրա ստեղծագործության հանդեպ:

Ամերիկայի կեն դար է՝ Հայաստանում տպագրվում են Սարդյանին նվիրված հոդվածներ, հուշագրություններ, գրախոսություններ, էսսեներ, որոնց հեղինակների շարքը մեջ են Պ. Սեակը, Գ. Մահարին, Հ. Մաթևոսյանը, Վ. Դավթյանը և ուրիշներ: Ռուսագրավ են գրականագետներ Ար. Գրիգորյանի, Լ. Մկրտչյանի, Լ. Հախվերդյանի, Ս. Գուրալյանի և այլոց մեծարանքի ելույթները ամսագրում: Նկատելի են ողջունելի են թարգմանիչների ջանքերը: Այս առումով դրվատանքի արժանի է թարգմանչուհի և գրականագետ Նատալյա Գոնչարի կատարած գործը: Հայաստանում թարգմանվել են հրատարակվել են հուշակավոր գրողի փապակներն ու վեպերը, նրա ստեղծագործություններից առանձին հատվածներ, ընդարձակ էսսեներ, մի քանի պիեսներ ու ռուսական պատմվածքներ: Հայ ընթերցողին թանկարժեք նվել է Վ. Սարդյանի ներկերի չորս շատորակը, որի հայերեն թարգմանությունն իրականացրել են Ն. Գոնչարը, Վ. Գրիգորյանը, Ա. Գուրալյանը, Կ. Մուրմյանը, Գ. Հախվերդյանը, Խ. Հրաչյանը, Հր. Մաթևոսյանը, Խ. Դաշունցը, Գ. Էմինը, Զ. Բալայանը, Ռ. Ղազարյանը և այլք: Սարդյանի ներկերի չորս հատորները անագրել են Ն. Գոնչարը և Գ. Մելիքյանը: Վ. Սարդյանի մասին իր տպավորիչ խոսքն է տակ անգլիկ պոետ Վ. Դարթյանը: 4-րդ հատորը ներառակվում է Նատալյա Գոնչարի «Վ. Սարդյանի լուսնը ու ստեղծագործությունը» ծավալուն ու հագեցած հոդվածով: Ի դեպ, լուրջ արժանափորություն է Ն. Գոնչարի այն աշխատությունը Սարդյանի մասին, որ գեղարված է «Սարդյանի մասին գրականություն» քուհական ծնունդով (1985): Մեծ գրողի ստեղծագործությունների մասին գրվում են առնչախոսություններ: Տարիների ընթացքում լույս են

ընծայվել Ն. Գոնչարի «Վ. Սարգյանը եւ իր պատմվածքները» աշխատությունը (1976), Բ. Սանդյանի սարդյանական դրամատուրգիան բնութագրող «Մեծ քիթխցու առեղծված» հետազոտությունը (1998), Ա. Զվերեի՝ Վ. Սարգյանի ամբողջական ստեղծագործությունը նվիրված ուսումնասիրությունը (1962): Այս ամենի մոտ խրախուսելի ներույթ էր երեանի Աթոլյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սփյուռ» գիտատեսական կենտրոնում զուգարկած միջազգային գիտաժողովը՝ Վ. Սարգյանի ծննդյան 100-ամյակի առթիվ (2008թ. հոկտեմբերի 14-15-ը), որի ընթացքում զեկուցումով հանդես եկան բուլի ռեկտոր Ա. Ղուկասյանը («Բացման խոսք»), ՀՀ գրողների միության նախագահ Լ. Անանյանը («Վ. Սարգյանի կերպարը «Հայկական նազգրության մեջ»), ամերիկահայ բանասեր Օշին Քեյշյանը («Վ. Սարգյանի նպատր ամերիկյան գրականության եւ հայության», գրականագետներ Ս. Դանիելյանը («Գեղեցիկ սոխտակ ձիւ ամառ», կերպարների հոգեբանական քննություն»), Ա. Դոլուխանյանը («Ամերիկյան մեծ գրողը հայկական ոգով»), Դ. Նազարյանը («Վ. Սարգյան. Հայրուրից հավերժություն մի քայլ է»), Ա. Հակոբյանը («Վ. Սարգյանի պատմվածքների ժանրային առանձնահատկությունները»), Վ. Փիլոյանը («Վ. Սարգյանը՝ Հրատ Մաթնոսյանի գնահատմամբ»), Լ. Մուրաֆյանը («Թատերագիր Վ. Սարգյանը եւ առնչությունները հայ թատրոնի հետ»), Հ. Հարությունյանը (100-ամյա նրկխան), Ե. Լյարալնոյանը («Քննադատական մտածողության զարգացման իմանախնդիրը Վ. Սարգյանի ստեղծագործություններում»), Հ. Մուսայելյանը («Մարդու իմաստարանական խնդիրը Վ. Սարգյանի ստեղծագործություններում»), Բ. Գալստյանը («Գոյափիլիսոփա Վ. Սարգյանը»), Գիտաժողովում ելույթներ են ունեցել նաեւ մի խումբ ուսանողներ:

Վերոնշյալներն իրավուրք են վերապահում Հայաստանը համարել համաշխարհային սարդյանագիտության առաջատար երկրներից մեկը, որը ջանում է մասսայականացնել մեծ արվեստագետի ստեղծագործությունը:

Մանկության թեման ակնառու տեղ է գրավում Վ. Սարգյանի ստեղծագործության մեջ: Ճիշտ է, այդ հարցին անդրադարձել են որոշ աշխատություններում, սակայն առայսու առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել: Ձեռնամուխ լինելով «Մանկության թեման Վ. Սարգյանի ստեղծագործություններում» աշխատության ստեղծմանը՝ մենք նկատի ենք առել Վ. Սարգյանի այն երկերն ու պատմվածքների շարքերը, որոնցում անմահ գրողը շոշափել է մանկության տարիների քաղցր ու դառն, ամեն դեպքում անմոռանալի օրերի ընթացքը: Դրանք առանձին պատմվածքներ, վիպակներ ու վեպեր են, հանրահայտ դրամաներ, ոլորնք բեմադրանք են աշխարհի տարբեր թատրոններում, ինչպես նաեւ գրողի հուշագրությունները առնչված մանկության ու պատանեկության տարիների:

Վ. Սարգյանի արժարժած խնդրո առարկա թեման հրամայական է եւ այսօրվա, եւ վաղվա համար: Նրանցում զաղափարական խորքով ու զեկարկնատական ինքնատիպության պատկերված են մանկության հուզաշխարհն ու հոգեկան երանգները:

Պետք է խոստովանել, որ առաջին անգամ է նման թեման ուսումնասիրվում ամբողջության մեջ: Ուստի կարելոթում ենք սույն աշխատության արդիական, գործնական արժեքը՝ Վ. Սարգյանի մանկության թեման շոշափող ստեղծագործությունները սերտ առնչություններ ունեն համաշխարհային թե՛ դասական եւ թե՛ գրողի ապրած ժամանակաշրջանի գրական նվաճումների հետ:

Այդ համապատկերի վրա առաջին հերթին հետամուտ ենք եղել Սարգյանի գրական ժառանգության իմանական միտումներին՝ անդրադառնալով նաեւ այն զնահատականներին, որ տրվել են գրողի երկերին: Մեզ հետաադորդող հռչակավոր գրողի մանկության թեման արժարժող ստեղծագործության զարգացմանն առնչվող գիտական հայացքների ու հետախոննների ամբողջությունն է, գրողի գեղարվեստական խոսքի դերի ու նշանակության խորքային ընկալումը: Թվում է, թե այն կհետաքրքրի գիտահետազոտական, բուհական, կրթական բոլոր ոլորտներին. ինչպես նաեւ ընթերցողների լայն շրջանակներին: Այս համազումնքը թելադրել է մեզ՝ ապր պատկերացնելու մեր նպատակն ու խնդիրները, այն է՝ դիտարկել, վերլուծել, զնահատել կարևոր ելակետներն ու ձեռքբերումները՝ համաշխարհային, առաջին հերթին, ամերիկյան գրականության համապատկերի վրա, որոնք բնութագրական են Վ. Սարգյանի եւ նրա ժամանակակից գրողների ստեղծագործություններին:

Հետամուտ լինելով աշխատանքին՝ մեզ հուզել է թեմայի մշակվածությունը եւ մեր բերելը գիտական նորությունը: Առաջին հերթին ձգտել ենք խնդրո առարկա թեման արժեքավորել մեր ընկալմամբ եւ մեկնակետով: Մեր ուսումնասիրության նորությունը համարում ենք Վ. Սարգյանի թեմային առնչվող երկերի ստեղծագործական եւ գործնական նշանակության ընդգծումն ու

գործնականորեն՝ ուշադրության կենտրոնում պահելով այդ ստեղծագործությունների հաջգումն ու հարստացումը պայմանավորող ուղիները՝ դրանք սերտորեն կապելով թե՛ ԱՄՆ-ում և թե՛ մեր ժողովրդի կյանքում տնդի ունեցող պատմական-մակատագրական նշանակություն ունեցող իրադարձությունների հետ:

Մեր այսին աշխատության տեսամթերքային հիմքը մեթոդաբանական սկզբունքների համալիր կիրառումն է: Երևույթներն ուսումնասիրել ենք գրականության զարգացման կոնկրետ ժամանակների՝ մեզ՝ նկատի ունենալով ուսանողականության և գրականության սերտ ազդեցությունները: Այստեղ մեզ օգնել են համաժամանակյա ու տարաժամանակյա, համագործակցող գրողներ և համեմատական վերլուծությունների գիտական մեթոդները: Մակայն այս ամենի մի մեզ ավելի ձգել է շարժամեթոդիկ ստիպական հայեցակետը, որը և հնարավորություն է տվել մեզան նրկերը վերլուծել և գնահատել կյանքի ընթացքի ազդեցող թրթիւնների, դարաշրջանի ազդեցող թափանցիկ կապերի առնչությամբ:

Վ. Սարգսյանը համոզված է եղել, որ միշտ ընդգծել է, որ գրողը գրում է ոչ թե պատմվածքներ և վեպեր, այլ «վիպի մի գիրք»: Հայտնի է, որ նա ստեղծագործել է տարբեր ժրագրերով և բոլոր ուղիքներով դրամորեն իր ինքնատիպ տաղանդը՝ գնահատվելով թե՛ ընթերցողների և թե՛ գրական լիարժեքների կողմից: Եվ ստացվել է այնպես, որ աշխարհամասշտաբ գրողի իր կյանքի տարբեր ժամանակներում դիմել է տարբեր գեղարվեստական ժանրերի: Թեպետ նրա ստեղծագործական անապարհը բաժանվել է չորս էտապի՝ ելնելով որևէ ժանրի գերակշռությունից, մենք պատկանահամար ենք գտել մեր աշխատանքը բաժանել ժանրային սկզբունքներից ելնելով նրանցից: «Մանկությունը Վ. Սարգսյանի ստեղծագործություն», «Մանկությունը Վ. Սարգսյանի ստեղծագործություն», «Մանկությունը Վ. Սարգսյանի ստեղծագործություն»:

Գրականագետ Դ. Նազարյանը Վ. Սարգսյանին նվիրված գիտաժողովում իր գեկուցման մեջ ելած է. «Վիպում Սարգսյան. Հայրենիքի հավերժության մի քայլ է»:

Թող ղեպի հավերժություն տանող սարգսյանական ճանապարհին իմ գիտական աշխատանքը համարվի մի ծաղիկ, որից զգացվի անմահ գրողի նրկերի այն անսնցանելի բույրը, անարկությունը նվիրում է մանկությանը լինի՝ այն դառն, թե՛ ուրախալի:

Резюме

В данной статье представлены жизнь и творческий путь великого писателя В. Сарояна. Отмечаются значение и место его творчества в истории мировой литературы XX века. Указывается, что благодаря его мастерству, он занимал свое место в ряду таких знаменитых писателей, как Э. Хемингуэй, У. Фолкнер, Т. Вулф и другие.

Ссылаясь на его высказывания, отмечается, что язык творчества В. Сарояна — английский, страна, где он прожил — Америка, а дух — армянский. Относительно указывается, что темы творчества писателя исчерпаны как из жизни американцев, так и из жизни своего, армянского народа, проживающего в Эрзено после геноцида армян в Османской Турции в 1915г.

Գրականություն

1. «Սարգսյանի ճշմարտության նունից»-«Միտոս» գիտությունական կենտրոն, Եր., 2009, էջ 23:
2. «Միտոսի գրողները սովորապես գրականություն ստանի» Եր., 1980, էջ 163:
3. Ինտերնետի էջերից՝ «Սարգսյան Վիպում Դրամորենի» հայ գրող, էջ 1:
4. Վ. Սարգսյան, Երկեր 4 հատորով հ. 2, Եր., 1987, էջ 43:
5. Վ. Սարգսյան, Պատմվածքներ, հարգալիցներ, հանքներ, հուշեր, Եր., 1999, էջ 193:
6. Ս. Սարգսյան, Հայոց ազգային գաղափարախառնություն, Եր., 2005թ., էջ 184: